

## **«ՍԱՍՆԱ ԾՈԵՐ» ԷՊՈՍԻ ԿԱՆԱՑ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ՇԱՐՁԻՑ ԻՍՍԻԼԻ ԿԵՐՊԱՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

**Ա. Ա. ՂԱՐԻԲՅԱՆ  
ԳՊՀ դասախոս**

«Սասնա ծոեր» էպոսում Սասնա հերոսուիկմերին հավասարազոր կերպար է Խսմիլ խաթունը կամ Մսրա Մելիքի կինը: Վիպական հյուսվածքում այս կերպարը կարևոր և կայուն դերակատարում ունի վեպի ներքին ասելիքի ամբողջացման և սյուժեի երկրևեր զարգացման առումով: Խսմիլ խաթունը վեպի միակ կին հերոսուիկն է, որը գործում է պատուի և երկրորդ, և երրորդ ճյուղերում, ինչով էլ պայմանավորված է նրա երկակի բնույթը:

Էպոսի երկրորդ ճյուղում Խսմիլ խաթունը (Մսրա Մելիքի կինը) նույն ճյուղում գործող Արմաղանի (Միերի կնոջ) նման պահպանում է թագուհու, մեծ մոր հզորությունը, խոսքի և կամքի ուժը, ինչը առանձելաբանության մեջ կայուն օրինաչփություն չէ, քանի որ ամուսնությունից հետո հերոսուիկները, սովորաբար, եթե նույնիսկ հսկա են և պահպանում են իրենց ֆիզիկական ուժը, ապա նրանց խոսքը և կամքը այլևս չունեն մինչամուսնական ուժը և ազդեցությունը, հատկապես եթե դա վերաբերում է սերուդ ունենալուն: Այս առումով առանձնանում են Խսմիլն ու Արմաղանը, որոնք հզոր են և թելադրող նույնիսկ, այսպես ասած, երկրորդ անգամ ամուսնական առագաստ մտնելով: Արմաղանը երդմնազանց լինելուց հետո է Դավթին ունենում, ինչը նշանակում է, որ նա պահպանել էր իր խոսքի ուժը ամուսնությունից հետո, և Խսմիլը Մելիքի հետ ամուսնանալուց հետո է «իր օթախ» ընդունում Միերին. Երկու դեպքերում էլ թելադրող կողմերը կանայք են:

Էպոսի երկրորդ ճյուղում Խսմիլ խաթունը գործում է միայն մի միջադեպում. հրավիրում է Միերին Մըսըր՝ գայթակղելով նրան գոտիկի, լաշակի միջոցով, կամ այլ տարբերակով՝ որպես Միերի և Մելիքի նախնական պայմանավորվածության արդյունք՝ իրագործելու այս ճյուղի գլխավոր գաղափար՝ հզոր ժառանգի ծնունդը (ինչը այս ճյուղի հակադիր համազոր բներն է, հակակշռում է Արմաղանին<sup>1</sup>, որը պետք է ծնի Դավթին):

Երկրորդ ճյուղի այս դերակատարմանը Խսմիլ խաթունը հնարավոր գուգահեռներ ունի նաև մեր հնագույն վեպի Սաթենիկի հետ:

Վիպական հյուսվածքում այս երկու կանայք էլ այլազգի են, օտար են, գեղեցիկ են և խելացի, երկուսն էլ իրենց երկրի տիրուիկներն են<sup>2</sup>, ամուսնանում են՝ վերջին հաշվով իրենց երկրի շահերից ելնելով, ինչը շատ ծիշտ նկատում է Միերի կինը. «Ան այլազգի ի. տուն էրթաս, տը խառնվիս ըզնա»/ՍԾ 362/, «Քի կը տան՝ մեկ տղե մ իլնը ուր խամար. Իլնը, Մըսրա օջախ կայնացըցը, Սասնա

<sup>1</sup> Ա. Ղարիբյան, «Սասնա ծոեր» էպոսի կանանց կերպարների վիպական-դիցաբանական հատկանիշների համեմատական քննություն, Գավառի պետական համալսարանի Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 11:

<sup>2</sup> Օսերը լավ տանտիրուիկներին և խելացի կանանց կոչում են Սաթանա կամ ....«մեր տիրուիկ Սաթանա», իսկ ինքը՝ Սաթանան վիպական պատումներում հաճախ անվանվում է ...«տիկին-տիրուիկ»:

օջախ փըճըցըց» Ա(492): Այս հերոսուիհն, ինչպես նշում է Յ. Օրբելին, «Դեղձունի, Խանդութի նման ինքն է իր համար ընտրություն կատարում, թե ուն հանձնվի, թե ո՞վ պետք է նրան որդի պարգևի»:<sup>3</sup>

Որպես երկրի տիրութի՝ առջների Սաքանեյ-Սաքենիկը նույնպես նարթերի գերդաստանի մեջ մայրն է ու գլխավոր խորհրդատուն, և միշտ գերադրական դիրք ունի ամուսնական հարաբերություններում՝ իր բոլոր կողակիցների հետ<sup>4</sup>: Վիպական այս հատկանիշները իրենց հնագույն առասպելական արձագանքներով հասնում են մայրիշխանության ժամանակները, կապվուն են մայր աստվածուիհների պատկերացումների հետ<sup>5</sup>:

Իսմիլը և Սաքենիկը, որպես վիշապամայրեր, տարփանք են տածում իրենց ամուսինների հակառակորդների՝ վիշապազունների, վիշապամարտիկների (Իսմիլը՝ Սիերի, Սաքենիկը՝ Արգավանի) նկատմամբ և նրանց տիրելու համար օգտագործում են զայթակղության տարրեր միջոցներ. Իսմիլը Սիերին հարթեցնում է գինով, իսկ Սաքենիկ տիկինը տենչում է «Զարտախուր խաւարտ Եւ զտից խաւարժի Ի բարձիցն Արգաւանայ»:

Երկու հերոսուիհների կողմից առկա է դավաճանության փաստը. ընդ որում՝ տարփածուն հարաբերությունների որոշակի կետում ամուսնու երկրորդը լինելու իրավունքն ունի, որին նախորդում կամ հաջորդում է հակառակորդ լինելու իրողությունը:

Այս առասպելական հատկանիշը կապվում է երկվորյակ եղբայրների առապելին: Սիերն ու Մելիքը կրվից հետո են եղբայրանում և որոշում՝ ով շուտ մեռնի, մյուսը նրա ընտանիքին տիրություն անի: Իսկ Արգամը Արտաշեսից հետո նրա երկրորդը կոչվելու պատվին արժանանում է, հետո է համարվում թշնամի և սպանվում նրա որդիների կողմից: Երկու դեպքում էլ տարփածուն սովորաբար ամպուպային, վիշապային հերոսն է, ինչը ընդհանրապես բնորոշ է սիրո և գեղեցկության աստվածուիհներին, որի արդյունքում էլ սովորաբար ծնվում են մեռնող-հարնող կամ ժայռում փակվող, ժայռին զամված հերոսները:

Երկու հերոսուիհների որդիները՝ Արտավազդն ու Մսրա Մելիքը, հսկաներ են, փակվում են կամ իրենց վախճանը գտնում են փոսում կամ այրում՝ Ստորերկրյայթում: Խորենացին Արտավազդի մահվան մասին հաղորդում է. «...հանկարծ ինչ-որ ցնորդից շփոթվում խելագարվում է, ձիուց վայր է ընկնում մի խոր փոսի մեջ և այնտեղ խորասուզվում անհետանում է»<sup>6</sup>: Մսրա Մելիքն էլ քառասուն գազ հորում, ջաղացաքարերի և գոմեշի կաշիների տակ երկու կես է լինում կամ Արտավազդի նման անհայտանում. «կորսըվիր ի, չկա, ցվովիր հանդուդ-Սիվ ջուր գնացիր ի»<sup>7</sup>:

<sup>3</sup> Յ. Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, Երևան 1956, էջ 49:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Սաքենիկ-Սաքանան օսական եպոսի՝ նարթյան տարբերակներում «...ստանձնել է նաև նարթերի ոյուցազնական մոր պարտականությունները, նրա կերպարը սերտորեն միահյուսվել է վաղնջական գուշակի և կախարդուհու, դիցակերպ հսկայամարմին մայր աստվածուին արխահիկ պատկերացումներում»: /Տե՛ս Տ. Դալալյան, «Հայոց վիպական Սաքենիկ թագուհու կերպարի ծագումնաբանության շուրջ», ՊԲՀ, 2002, թիվ 2/:

<sup>6</sup> Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 1981, էջ 231:

<sup>7</sup> Սասնա ծոեր, հ Ա, էջ 436:

«Սասնա ծոեր» էպոսում Խսմիլի դավաճանությունը որպես այդպիսին չի ընկալվում, ընդհակառակը, Միերի հետ կենակցելը դիտվում է անհրաժեշտ, էպոսի վիպական պահանջից բխող քայլ, որպեսզի ծնվի «Մսրա օջախ պահողը». Մ. Թորոյանի պատումում Մելիքը, Միերին տեսնելով, ինքն է կնոջը համոզում, որ «Յոթն օր քու օթախ բողի պառկի»: Խսկ երբ «բացահայտվում է» նպատակը, այսինքն երբ հայտնի է դառնում, որ որդին ծնվելու է կամ ծնվել է, Միերի Մսրը մնալու անհրաժեշտությունը վերանում է, և **Խսմիլը արձակում է ճրան**, այսինքն՝ Միերը Սասուն է վերադառնում, երբ Խսմիլն է այդ ցանկանում: Այս առումով պետք է նկատել, որ Խսմիլի կերպարում, էպոսի վիպական պահանջներից ելնելով, բացակայում է սիրո դիցուիհներին բնորոշ տարփական սիրո գործառույթը, որը մահարեր հատկանիշ է, և որից դիցուիհները ստվորաբար չեն հրաժարվում մինչև հերոսի մահը: Այսինքն՝ Խսմիլը՝ որպես վիպական հերոսուիի, հակակշռում և նմանվում է Արմաղանին հակադիր բնեորում և ճրա նման, որպես օջախի, երկրի մասին հոգ տանող հերոսուիի /օրինակ, մոկացի Յովհանի պատումում Խսմիլը Մելիքի մահից հետո մտածում է «Մեկ տղա ընձը՝ հարկավուր ը, Ըն միր ազգին տիրութին ընը»<sup>8</sup>, հանդես է բերում «Մեծ տիկնոջ», մեծ մոր հատկանիշներ:

Այս կանայք՝ Սաթենիկը և Խսմիլը /երկրորդ ճյուղում/ հեռավոր աղերսներով հանդես են բերում վիշապամոր հատկանիշներ՝ «մայր վիշապաց», որոնց որդիները վիպական հյուսվածքում ընդհանրապես բնորոշվում են չար և նախանձոտ: Սրանք մայրերի առաջնեկներն են և չար էլության /վիշապ/ կրողներ են. Խորենացին ասում է. «Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ, Եվ դև փոխանակ եղին»<sup>9</sup>, իսկ Խսմիլ խարունը ունենում է Մըսրա Մելիքին, որը «Ֆերզե տղայ էր»<sup>10</sup> կամ «Աշխարք էնու դեմ կանգնող չկա»<sup>11</sup>:

Էպոսի երրորդ ճյուղում այս հերոսուիին իր բնույթով մոտենում է երկվորյակ եղբայրների մոր կերպարին: Խսմիլի որդիները՝ Դավիթն ու Մելիքը<sup>12</sup>, գերբնական ծագում ունեն, ծնվել են նույն հզոր հորից (Արկից) և դրսնորում են հակադիր էլություններ: Վերջինի պատճառով, երբ եղբայրները կրվում են, և մոր աղերսանքները չեն օգնում, նա ամենավտանգավոր պահին բացում է իր կրծքերը և կասեցնում հարվածը (Դավիթը մի զարկը բաշխում է ճրան), ինչպես Շովինարը<sup>13</sup>: Էպոսի վիպական հյուսվածքում Խսմիլը, որպես երկվորյակ եղբայրների մայր, առանձնանում է ինչպես իր որդու, այնպես էլ հոգերդու դաստիարակության, ճրան պաշտպանելու, խորհուրդներ տալու, ճրանց հանդեպ մայրական հոգացողությամբ ու սիրով (Շովինարը): Ինչպես նկատել է Յ. Օրբելին. «Էպոսում Խսմիլ խանումի կերպարն այնպես է կերտված, որ չնայած ճրա բոլոր խորամանկություններին ու փառասիրությանը, արդարացվում է այն կաթը, որով նա

<sup>8</sup> Սծ, էջ 426:

<sup>9</sup> **Մ. Խորենացի**, Յայոց պատմություն, Երևան, 1981, էջ 232:

<sup>10</sup> Սծ, էջ 362:

<sup>11</sup> Սծ, էջ 427:

<sup>12</sup> Յայկական «Սասնա ծոեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Եր. 2004, էջ 62:

<sup>13</sup> Սծ, հ Ա, Եր. 1936, էջ 882-884:

սնել է «աննման Դավթին»<sup>14</sup>:

Պետք է նշել, որ խսմիլ խաթունը, ինչպես նկատել է Ս. Զարությունյանը, նաև վիշապամարտի կինն է՝ իր անուղղակի դրսնորմամբ. «Դավիթը Մելիքին սպանելուց հետո ազատ է արձակում նրա մորն ու քրոջ, իսկ որոշ պատումներում՝ անգամ գնում է մոր մոտ, դաշնում Մսրա թագավոր: Այս մոտիվը հիշեցնում է Տիգրանի՝ Աժդահակի կնոջ (Վիշապամոր) գերեվարումը և Մասիսի փեշերին նրան ու իր սերնդին ազատ բնակություն տալը»<sup>15</sup>:

Այսպիսով Խսմիլ խաթունը իր արմատներով, կարելի է ասել, նույնքան առասպելական կերպար է, ինչպես Ծովինարը, Արմաղանը, Դեղձուն խաթունն ու Խանութը, և նրանց նման հզոր մայրաստվածությունների, «Մեծ տիկնոջ» հեռավոր արձագանքներն է կրում իր մեջ՝ միաժամանակ պահպանելով սիրո և հեշտանքի աստվածուհիներին բնորոշ առասպելական հեռավոր աղերսներ: Երրորդ ճյուղում հստակորեն հանդես է բերում երկվորյակ եղբայրների մոր հատկանիշներ՝ միաժամանակ դրսնորելով վիշապամոր հատկանիշներ:

Սակայն առասպելական կինն էպոսում վիպականացվում է, պատմական կերպար է դառնում, որին «ոչ թե կիրք հագեցնող սիրեկան է պետք, այլ արիասիրտ կտրիճ, որը, կամա թե ակամա, զգաստ թե հարբած վիճակում, նրան որդի պարզեցի»<sup>16</sup>:

## АНАЛИЗ ОБРАЗА ИСЛИМ ИЗ ЦЕПИ ЖЕНСКИХ ОБРАЗОВ ЭПОСА "САСНА ЦРЕР"

A. A. ГАРИБЯН

В статье образ Ислим рассматривается в сравнении с другими женскими образами эпоса, выявляется его мифологическая сущность, которая приобретает в эпосе эпические признаки.

## THE ANALYSIS OF THE CHARACTER OF ISLIM FROM THE RANGE OF WOMEN'S CHARACTERS IN THE EPOS "SASNA TSRER"

A. A. GHARIBYAN

This article is concerned with the character of Islim in comparison with other women's characters in the epos "Sasna Tsrer", it reveals its mythological nature which takes epic features in the epos.

<sup>14</sup> Յ. Օրբելի, Յայկական հերոսական էպոսը, Երևան, 1956, էջ 49:

<sup>15</sup> Ս. Զարությունյան, Յայ առասպելաբանություն, Բեյրութ, էջ 189:

<sup>16</sup> Յ. Օրբելի, Յայկական հերոսական էպոսը, Երևան, 1956, էջ 46: